# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
✉ 2001, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040, 0322 22648,
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

N 062/11739 25 հոկտեմբեր 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղուկասյան

Ձեզ են ուղարկվում Վանաձոր համայնքի ավագանու 2019թ. հոկտեմբերի 18-ի թիվ 121-141 որոշումները:

Առդիր՝ 34 էջ:

Հարգանքով՝

Недействительная подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

*Կատ. Ք, Տ ԵՎ Ա բաժնի պետի տեղակալ՝ Լուսինե Ստեփանյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 121**

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Վանաձոր համայնքի ավագանու 2019թ. հոկտեմբերի 18-ի հերթական նիստի օրակարգը.

1.Վանաձոր համայնքի ավագանու 2019թ. հոկտեմբերի 18-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

2.Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29–ի թիվ 129-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ. Գրիգորյան

3.Վանաձորի քաղաքային համայնքի ավագանու 02 հոկտեմբերի 2013 թվականի թիվ 70-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Ա.Օհանյան

4. «Վանաձորի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին կանոնակարգը հաստատելու մասին

զեկ. Ա.Օհանյան

5. Սերգեյ Միհրանի Դանիելյանին «Վանաձորի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին

զեկ. Ա.Օհանյան

6. Հայկ Լևոնի Հովիվյանին «Վանաձորի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին

զեկ. Ա.Օհանյան

7. Հրաչիկ Արմենակի Ղազարյանին «Վանաձորի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին

զեկ. Ա.Օհանյան

8.Վանաձորի համայնքապետարանի վարչական շենքի ջեռուցումը կազմակերպելու համար ժամանակավորրապես հաստիքներ նախատեսելուն համաձայնություն տալու և աշխատակիցների աշխատավարձի չափեր սահմանելու մասին

զեկ. Ա.Օհանյան

9. Վանաձոր համայնքի ղեկավարին կից, Վանաձոր համայնքի տարածքում հասարակական կարգով գործող թվով 3 (երեք) խորհրդակցական մարմինների կազմը հաստատելու մասին

զեկ. Ա.Օհանյան

10. Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-4 թիվ 18 շենքի 14 երկու սենյականոց բնակարանը Տիգրան Վասակի Կիրակոսյանին նվիրատվությամբ հանձնելու և Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 109 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Կ.Պառավյան

11. «Վանաձոր համայնքի թիվ 32 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում խումբ բացելու մասին

զեկ. Գ.Բադոյան

12. «Վանաձոր համայնքի թիվ 34 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում խումբ բացելու մասին

զեկ. Գ.Բադոյան

13. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ.Բադոյան

14.«Վանաձորի Ալբերտ Ազարյանի անվան «Կենտրոն» համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզադահլիճները «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամին վարձակալությամբ հանձնելու մասին

զեկ. Վ. Դավիթավյան

15.Վազգեն Արշակի Բադալյանին Վանաձոր քաղաքի Նարեկացի փողոցի թից 47 հասցեում գտնվող տարածքը նվիրատվությամբ հանձնելու մասին

զեկ. Վ. Դավիթավյան

16. Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գներ սահմանելու մասին

զեկ. Ս. Աբովյան

17. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ. Ս. Աբովյան

18. Վանաձորի համայնքի ավագանու 25 սեպտեմբերի 2003 թվականի թիվ 167 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Ս. Աբովյան

19. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝ Նարեկացու փողոցի 1-ին փակուղի թիվ 11 հասցեում գտնվող 0.0099հա մակերեսով 06-001-0208-0010 ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

զեկ. Ս. Աբովյան

20. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

զեկ. Ս. Աբովյան

21. Օվսաննա Նորայրի Թադևոսյանին Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 3-1/4-1 հասցեում գտնվող հողամասը նվիրատվությամբ հանձնելու մասին

զեկ. Ս. Աբովյան

22. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

| ԿՈՂՄ ( 24 ) | | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 0 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | --- | — |
| Գ.Քալանթարյան | Կ.Դավթյան | | |
| Վ.Դոխոյան | Ա.Խաչատրյան | | |
| Ա.Մատինյան | Ք. Մարուքյան | | |
| Հ.Մովսիսյան | Կ. Ղուկասյան | | |
| Վ.Ավագյան | Ա.Սիրադեղյան | | |
| Ս.Մելքոնյան | Հ.Սիմիկյան | | |
| Ս.Ղամբարյան | Վ.Կռոյան | | |
| Մ.Ապերյան | Ա.Կարապետյան | | |
| Հ.Ղամբարյան | Ռ.Մարգարյան | | |
| Դ.Հակոբյան | Կ.Բեկչյան | | |
| Ս.Աղաբեկյան | | | |
| Ա.Լոքյան | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 122-Ն**

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29 –Ի ԹԻՎ 129-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Վանաձոր համայնքի բյուջեի ծախսային մասում կատարել 1 945 000 (մեկ միլիոն ինը հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամի փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքի բյուջեի տողերը համարել փոփոխված՝ սույն որոշման 1-ին կետից բխող փոփոխություններին համապատասխան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| ԿՈՂՄ ( 25 ) | | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 0 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | --- | — |
| Գ.Քալանթարյան | Կ.Դավթյան | | |
| Վ.Դոխոյան | Ա.Խաչատրյան | | |
| Ա.Մատինյան | Ք. Մարուքյան | | |
| Հ.Մովսիսյան | Կ. Ղուկասյան | | |
| Վ.Ավագյան | Ա.Սիրադեղյան | | |
| Ս.Մելքոնյան | Հ.Սիմիկյան | | |
| Ս.Ղամբարյան | Վ.Կոռյան | | |
| Մ.Ապերյան | Ա.Կարապետյան | | |

Հ.Ղամբարյան Ս.Կարապետյան

Դ.Հակոբյան Ռ.Մարգարյան

Ս.Աղաբեկյան Կ.Բեկյան

Ա.Լոքյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

Հավելված
Վանաձոր համայնքի ավագանու
«18» հոկտեմբերի 2019թ.
թիվ 122-Ն որոշման

# ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հազար դրամ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը | Ավելացում | Պակա-սեցում | Վարչական բյուջե | այդ թվում ըստ հոդվածների<br>4239<br>Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | այդ թվում ըստ հոդվածների<br>4727<br>Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 2000 | X | X | X | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** *(տող2811+տող2951)* | 0,0 | 1945,0 | -1945,0 | 0,0 | -1945,0 | 1945,0 |
| 2811 | 08 | 1 | 1 | Հանգստի և սպորտի ծառայություններ | -1945,0 | | -1945,0 | -1945,0 | -1945,0 | |
| | | | | *Սպորտային միջոցառումներ* | -1945,0 | | -1945,0 | -1945,0 | -1945,0 | |
| 2951 | 09 | 5 | 1 | Արտադպրոցական դաստիարակություն | 1945,0 | 1945,0 | | 1945,0 | 0,0 | 1945,0 |
| | | | | *Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից* | 1945,0 | 1945,0 | | 1945,0 | | 1945,0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 123-Ն**

## ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 70-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքային համայնքի ավագանու 02 հոկտեմբերի 2013 թվականի ««Վանաձորի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու կանոնակարգը հաստատելու և Վանաձորի համայնքի ավագանու 2010թ. հունիսի 22-ի թիվ 49-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 70-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| ԿՈՂՄ ( 23 ) | | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 2 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | --- | Վ.Կոռյան |
| Գ.Քալանթարյան | Կ.Դավթյան | | Ա.Կարապետյան |
| Վ.Դոխոյան | Ա.Խաչատրյան | | |
| Ա.Մատինյան | Ք. Մարուքյան | | |
| Հ.Մովսիսյան | Կ. Ղուկասյան | | |
| Վ.Ավագյան | Ա.Սիրադեղյան | | |
| Ս.Մելքոնյան | Հ.Սիմիկյան | | |
| Ս.Ղամբարյան | Ս.Կարապետյան | | |
| Մ.Ապերյան | Ռ.Մարգարյան | | |
| Հ.Ղամբարյան | Կ.Բեկչյան | | |
| Դ.Հակոբյան | Ս.Աղաբեկյան | | |
| | Ա.Լոքյան | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 124**

## «ՎԱՆԱՁՈՐԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել «Վանաձորի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

| ԿՈՂՄ ( 24 ) | | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 1 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | --- | Վ.Կոռյան |
| Գ.Քալանթարյան | Կ.Դավթյան | | |
| Վ.Դոխոյան | Ա.Խաչատրյան | | |
| Ա.Մատինյան | Ք. Մարուքյան | | |
| Հ.Մովսիսյան | Կ. Ղուկասյան | | |
| Վ.Ավագյան | Ա.Սիրադեղյան | | |
| Ս.Մելքոնյան | Հ.Սիմիկյան | | |
| Ս.Ղամբարյան | Ա.Կարապետյան | | |
| Մ.Ապերյան | Ս.Կարապետյան | | |
| Հ.Ղամբարյան | Ռ.Մարգարյան | | |
| Դ.Հակոբյան | Կ.Բեկչյան | | |
| | Ս.Աղաբեկյան | | |
| | Ա.Լոքյան | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

Հավելված
Վանաձոր համայնքի ավագանու
« 18 » հոկտեմբերի 2019թ.
թիվ 124 որոշման

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## «ՎԱՆԱՁՈՐԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

1. Վանաձոր քաղաքի հանրության առջև ունեցած բացառիկ և անուրանալի ավանդի, երկարամյա անբասիր գործունեության խրախուսման և արժանիքների ճանաչման նպատակով սահմանվում է «Վանաձորի պատվավոր քաղաքացի» կոչումը (այսուհետ՝ կոչում ):
2. Կոչումը շնորհվում է ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներին՝ անկախ ազգությունից, սեռից, դավանանքից, քաղաքական հայացքներից:
3. Կոչումը շնորհվում է Վանաձորի համայնքի ավագանու որոշմամբ:
4. Կոչումը Վանաձոր քաղաքի բնակիչների կողմից քաղաքացու ակնառու, բացառիկ արժանիքների բարձրագույն գնահատականն է: Այն կոչված է խթանելու քաղաքացիների աշխատանքային և հասարակական ակտիվության բարձրացմանը, խրախուսել Վանաձոր քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման գործում ներդրած ջանքերը, երիտասարդ սերնդին հայրենասիրության ոգով դաստիարակումը:
5. Կոչումը շնորհվում է քաղաքացու կենդանության օրոք:
6. Կոչումը շնորհվում է տարին մեկ անգամ և հանձնվում է «Վանաձորի օր» տոնակատարությունների ժամանակ, եթե Վանաձորի համայնքի ավագանին այլ որոշում չի կայացնում:
7. Կոչումը չի կարող շնորհվել այն անձին, որն ունի չմարված կամ չհանված դատվածություն:
8. Կոչմանը արժանացած անձին հանձնվում է պատվոգիր, Վանաձորի պատվավոր քաղաքացու վկայական ու կրծքանշան և պատվո ալ ժապավեն՝ «Վանաձորի Պատվավոր քաղաքացի» վերտառությամբ: Պատվոգրի, վկայականի, կրծքանշանի և ժապավենի ձևերը հաստատում է Վանաձորի համայնքի ավագանին:

### *«ՎԱՆԱՁՈՐԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ*

9. Կոչում շնորհելու հիմքեր են՝

   ա) երկարամյա մեկենասային կամ բարեգործական գործունեությունը,

բ) տնտեսության, գիտության, մշակույթի, առողջապահության, կրթության և սպորտի բնագավառներում ունեցած նշանակալից ավանդը, որն ստացել է միջազգային կամ հանրապետական ճանաչում,

գ) քաղաքացիական կամ ծառայողական պարտքը կատարելիս անձի կողմից կատարված հերոսական գործողությունները,

դ) Վանաձոր քաղաքի պատմամշակութային ժառանգությունը պահպանելու և զարգացնելու, նրա բնակիչների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու գործում ունեցած մեծ ավանդը,

ե) պետական և հասարակական գործունեության մեջ, ժողովրդավարության և հրապարակայնության առաջընթացի, հոգևոր ու մտավոր ներուժի զարգացման ասպարեզներում ունեցած ձեռքբերումները,

զ) պետական շինարարության, արդյունաբերության, քաղաքաշինության, ճարտարապետության, զինվորական և ոստիկանական ծառայության, մարդու իրավունքների պաշտպանության բնագավառներում ունեցած մեծ ավանդը,

է) շրջակա միջավայրի պաշտպանության գործընթացում երկարամյա արդյունավետ գործունեությունը,

ը) Հայաստանի Հանրապետությունում և դրա սահմաններից դուրս Վանաձոր քաղաքի հեղինակության բարձրացման գործընթացում ունեցած մեծ ներդրումը,

թ) Վանաձոր քաղաքի և այլ քաղաքների միջև բարեկամական հարաբերություններ հաստատելու գործում ունեցած անուրանալի ավանդը:

10. Կոչումը կարող է շնորհվել տարեկան մինչև 3 անձի:
11. Կոչմանը ներկայացվող անձի համաձայնությունը պարտադիր է:
12. Կոչումը շնորհելու առաջարկությամբ կարող են հանդես գալ՝

ա) Լոռու մարզպետը,

բ) Վանաձոր համայնքի ղեկավարը,

գ) Վանաձոր համայնքի ավագանու անդամը կամ անդամները,

դ) Վանաձորի աշխատանքային և ստեղծագործական կոլեկտիվները,

ե) Վանաձորում գրանցված և գործող հասարակական կազմակերպություններն ու հիմնադրամները,

զ) նախաձեռնող խմբերը:

13. Առաջարկության իրավունք ունեցող սուբյեկտները կոչմանը կարող են ներկայացնել միայն մեկ թեկնածություն:
14. Կոչումը շնորհելու առաջարկությունը ներկայացվում է Վանաձորի համայնքի ավագանուն, իսկ յուրաքանչյուր առաջարկ ուսումնասիրվում է առանձին՝ կոչմանը ներկայացվող անձին վերաբերող հետևյալ փաստաթղթերի առկայության պայմաններում.

ա) առանձնահատուկ վաստակի մասին վկայող փաստաթղթերի պատճենները,

բ) հայտնագործությունների, գյուտերի, նվաճումների մասին վկայող նյութերի և փաստաթղթերի պատճենները,

գ) կենսագրական տվյալներ:

15. Այն անձանց դեպքում, որոնց նկատմամբ նախկինում բացասական որոշում է կայացվել, Կոչում շնորհելու առաջարկությունը կարող է ուսումնասիրվել միայն առաջ քաշված հանգամանքների և դրդապատճառների փոփոխման պարագայում: Բացառությամբ կանոնակարգի 10-րդ կետով ամրագրված սահմանափակման՝ տեղական ինքնակառավարման մարմինների մեկ գումարման ժամանակահատվածում նույն անձի թեկնածությունը չի կարող առաջադրվել մեկ անգամից ավելի:

16. Գործող Պատվավոր քաղաքացիների թիվը չի կարող գերազանցել 30-ը:

17. Կոչում շնորհելու հարցը Վանաձորի համայնքի ավագանու նիստին է ներկայացվում Վանաձոր համայնքի պաշտոնական կայքում թեկնածուի մասին տեղեկություն հրապարակելուց հետո:

18. Մինչև իրենց լիազորությունների ավարտը կոչմանը չեն կարող առաջադրվել՝

ա) պետական բարձրաստիճան պաշտոնյաները,

բ) ՀՀ ԱԺ պատգամավորները,

գ) Վանաձորի համայնքի ղեկավարը և ավագանու անդամները:

19. Կոչում շնորհելու որոշման մասին տեղեկացվում է թեկնածուին, իսկ որոշումը պարտադիր ենթակա է հրապարակման:

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20. Վանաձորի պատվավոր քաղաքացիները սեփական անվան հետ հրապարակայնորեն կարող են օգտագործել նշված կոչումը:

21. Վանաձորի պատվավոր քաղաքացիներն ունեն Վանաձորի տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց մոտ արտահերթ ընդունելության իրավունք

22. Սույն կանոնակարգը այլ իրավունքներ և արտոնություններ չի սահմանում:

## ՌԵԳԱԼԻԱՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԵԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

23. Վանաձորի պատվավոր քաղաքացու պատվոգիրն ու վկայականը ստորագրում է Վանաձորի համայնքի ղեկավարը:

24. Վանաձորի պատվավոր քաղաքացու պատվոգիրը, վկայականը, կրծքանշանը և պատվո ալ ժապավենը "Վանաձորի Պատվավոր քաղաքացի" կոչմանն արժանացած անձին հանձնվում է հանդիսավոր պայմաններում քաղաքի տոնին նվիրված միջոցառումների

ժամանակ Վանաձորի համայնքի ղեկավարի կողմից, Վանաձորի համայնքի ավագանու անդամների և քաղաքացիների ներկայությամբ:

25. Վանաձորի պատվավոր քաղաքացիների անունները ժամանակագրական կարգով անցկացվում են Վանաձորի Պատվո գրքում:
26. Վանաձորի Պատվավոր քաղաքացիները տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հրավիրվում են պետական, տեղական տոներին նվիրված միջոցառումներին և այլ հիշարժան իրադարձություններին:
27. Պատվավոր քաղաքացու մահից հետո ժառանգներին է մնում Վանաձորի պատվավոր քաղաքացու պատվոգիրը, Վանաձորի պատվավոր քաղաքացու վկայականը, Վանաձորի պատվավոր քաղաքացու կրծքանշանը:
28. Վանաձորի համայնքի ավագանու որոշմամբ կարող է.

    ա) այն տան վրա, որտեղ ապրել է պատվավոր քաղաքացին, փակցվել հուշատախտակ,

    բ) Վանաձորի պատվավոր քաղաքացու անունը հավերժացվել այլ կերպ:

## ԿՈՉՈՒՄԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

29. Այն անձը, որին շնորհված է «Պատվավոր քաղաքացի» կոչումը, Վանաձորի համայնքի ավագանու որոշմամբ կարող է զրկվել այդ կոչումից հանցագործության մեջ մեղադրվելու դատավճիռը ուժի մեջ մտնելուց հետո:
30. Անձին կոչումից զրկելու դեպքում Վանաձորի պատվավոր քաղաքացու պատվոգիրը, վկայականը, կրծքանշանը, պատվո ալ ժապավենը ենթակա են վերադարձման: Վանաձոր քաղաքի Պատվո գրքում կատարվում է համապատասխան գրառում:
31. Այն անձը, որը զրկվել է կոչումից չի կարող երկրորդ անգամ առաջադրվել այդ կոչմանը:
32. Այն քաղաքացիների համար, որոնք ապօրինի դատապարտվել են, բայց հետագայում արդարացվել, կոչումը վերականգնվում է համայնքի ավագանու որոշմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 125**

## ՍԵՐԳԵՅ ՄԻՀՐԱՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ «ՎԱՆԱՁՈՐԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լուսավոր Հայաստան» խմբակցության ղեկավար Քրիստ Մարուքյանի 04.09.2019թ. թիվ ԼՀ-57-09-2019 գրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, Վանաձոր համայնքի ավագանու 18 հոկտեմբերի 2019 թվականի թիվ 124 որոշմամբ հաստատված կանոնակարգով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սերգեյ Միհրանի Դանիելյանին շնորհել «Վանաձորի պատվավոր քաղաքացի» կոչում:

| ԿՈՂՄ ( 25 ) | | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 0 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | --- | — |
| Գ.Քալանթարյան | Կ.Դավթյան | | |
| Վ.Դոխոյան | Ա.Խաչատրյան | | |
| Ա.Մատինյան | Ք. Մարուքյան | | |
| Հ.Մովսիսյան | Կ. Ղուկասյան | | |
| Վ.Ավագյան | Ա.Սիրադեղյան | | |
| Ս.Մելքոնյան | Հ.Սիմիկյան | | |
| Ս.Ղամբարյան | Վ.Կռոյան | | |
| Մ.Ապերյան | Ա.Կարապետյան | | |
| Հ.Ղամբարյան | Ս.Կարապետյան | | |
| Դ.Հակոբյան | Ռ.Մարգարյան | | |
| Ս.Աղաբեկյան | Կ.Բեկչյան | | |
| Ա.Լոքյան | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 126**

## ՀԱՅԿ ԼԵՎՈՆԻ ՀՈՎԻՎՅԱՆԻՆ «ՎԱՆԱՁՈՐԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի առաջարկը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, Վանաձոր համայնքի ավագանու 18 հոկտեմբերի 2019 թվականի թիվ 124 որոշմամբ հաստատված կանոնակարգով՝ Վանաձոր համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայկ Լևոնի Հովիվյանին շնորհել «Վանաձորի պատվավոր քաղաքացի» կոչում:

| ԿՈՂՄ ( 25 ) | | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 0 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | --- | — |
| Գ.Քալանթարյան | Կ.Դավթյան | | |
| Վ.Դոխոյան | Ա.Խաչատրյան | | |
| Ա.Մատինյան | Ք. Մարուքյան | | |
| Հ.Մովսիսյան | Կ. Ղուկասյան | | |
| Վ.Ավագյան | Ա.Սիրադեղյան | | |
| Ս.Մելքոնյան | Հ.Սիմիկյան | | |
| Ս.Ղամբարյան | Վ.Կոռյան | | |
| Մ.Ապերյան | Ա.Կարապետյան | | |
| Հ.Ղամբարյան | Ս.Կարապետյան | | |
| Դ.Հակոբյան | Ռ.Մարգարյան | | |
| Ս.Աղաբեկյան | Կ.Բեկչյան | | |
| Ա.Լոքյան | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 127**

## ՀՐԱՉԻԿ ԱՐՄԵՆԱԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ «ՎԱՆԱՁՈՐԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ կենսաբանաքիմիական ֆակուլտետի դեկան, Կ.Գ.Դ., պրոֆեսոր Ջ.Ս.Վարդանյանի 06.09.2019թ.-ի թիվ 108/5946 գրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, Վանաձոր համայնքի ավագանու 18 հոկտեմբերի 2019 թվականի թիվ 124 որոշմամբ հաստատված կանոնակարգով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հրաչիկ Արմենակի Ղազարյանին շնորհել «Վանաձորի պատվավոր քաղաքացի» կոչում:

| ԿՈՂՄ ( 26 ) | | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 0 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | --- | — |
| Գ.Քալանթարյան | Կ.Դավթյան | | |
| Վ.Դոխոյան | Ա.Խաչատրյան | | |
| Ա.Մատինյան | Ք. Մարուքյան | | |
| Ա.Ափինյան | Կ. Ղուկասյան | | |
| Հ.Մովսիսյան | Ա.Սիրադեղյան | | |
| Վ.Ավագյան | Հ.Սիմիկյան | | |
| Ս.Մելքոնյան | Վ.Կոռյան | | |
| Ս.Ղամբարյան | Ա.Կարապետյան | | |
| Մ.Ապերյան | Ս.Կարապետյան | | |
| Հ.Ղամբարյան | Ռ.Մարգարյան | | |
| Դ.Հակոբյան | Կ.Բեկչյան | | |
| Ս.Աղաբեկյան | Ա.Լոքյան | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 128**

## ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՋԵՌՈՒՑՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՀԱՍՏԻՔՆԵՐ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Վանաձոր համայնքի բյուջեի խնայողության տեսակետից և համայնքապետարանի վարչական շենքի ջեռուցման աշխատանքների կազմակերպումը ժամանակավորապես հնոցապաններ ընդունելու միջոցով՝ նպատակահարմարությունից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Վանաձորի համայնքապետարանի վարչական շենքի ջեռուցման աշխատանքների կազմակերպման համար ջեռուցման համակարգի օպերատորի երեք հաստիք՝ 84000-ական (ութսունչորս հազարական) ՀՀ դրամ աշխատավարձով և ջեռուցման համակարգի օպերատոր-կաթսայատան շահագործման և անվտանգության պատասխանատուի մեկ հաստիք 90000 (իննսուն հազար) ՀՀ դրամ աշխատավարձով նախատեսելուն՝ 2019թ. նոյեմբերի 1-ից մինչև 2020թ. մարտի 31-ը ժամանակահատվածի համար:

2. ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատակիցների հետ կնքել սեզոնային աշխատանքային պայմանագրեր:

| ԿՈՂՄ ( 26 ) | | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 0 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | — | — |
| Գ.Քալանթարյան | Կ.Դավթյան | | |
| Վ.Դոխոյան | Ա.Խաչատրյան | | |
| Ա.Մատինյան | Ք. Մարուքյան | | |
| Ա.Ափինյան | Կ. Ղուկասյան | | |
| Հ.Մովսիսյան | Ա.Սիրադեղյան | | |
| Վ.Ավագյան | Հ.Սիմիկյան | | |
| Ս.Մելքոնյան | Վ.Կոռյան | | |

Ս.Ղամբարյան Ա.Կարապետյան

Մ.Ապերյան Ս.Կարապետյան

Հ.Ղամբարյան Ռ.Մարգարյան

Դ.Հակոբյան Կ.Բեկչյան

Ս.Աղաբեկյան Ա.Լոքյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 129**

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԹՎՈՎ 3 (ԵՐԵՔ) ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետով, Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 26-ի թիվ 35-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-8-րդ կետերով և 10-րդ կետի դրույթներով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հաստատել Վանաձոր համայնքի ղեկավարին կից, Վանաձոր համայնքի տարածքում հասարակական կարգով գործող թվով 3 (երեք) խորհրդակցական մարմինների կազմը՝ համաձայն թիվ 1, 2, 3 հավելվածների:

| ԿՈՂՄ ( 26 ) | | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 0 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | --- | — |
| Գ.Քալանթարյան | Կ.Դավթյան | | |
| Վ.Դոխոյան | Ա.Խաչատրյան | | |
| Ա.Մատինյան | Ք. Մարուքյան | | |
| Ա.Ափինյան | Կ. Ղուկասյան | | |
| Հ.Մովսիսյան | Ա.Սիրադեղյան | | |
| Վ.Ավագյան | Հ.Սիմիկյան | | |
| Ս.Մելքոնյան | Վ.Կռոյան | | |
| Ս.Ղամբարյան | Ա.Կարապետյան | | |
| Մ.Ապերյան | Ս.Կարապետյան | | |
| Հ.Ղամբարյան | Ռ.Մարգարյան | | |
| Դ.Հակոբյան | Կ.Բեկչյան | | |
| Ս.Աղաբեկյան | Ա.Լոքյան | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 130**

**ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ՔՇՀ-4 ԹԻՎ 18 ՇԵՆՔԻ 14 ԵՐԿՈՒ ՍԵՆՅԱԿԱՆՈՑ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՏԻԳՐԱՆ ՎԱՍԱԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 109 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Տիգրան Վասակի Կիրակոսյանի դիմումը, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի 2019թ.-ի սեպտեմբերի 19-ի զեկուցագիրը, հաշվի առնելով Տիգրան Կիրակոսյանի մարզական բարձր նվաճումները, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տարոն-2 ՔՇՀ-4 թիվ 18 շենքի 14 երկու սենյականոց բնակարանը նվիրատվությամբ հանձնել Տիգրան Վասակի Կիրակոսյանին:
2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Տիգրան Վասակի Կիրակոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել բնակարանի և Տարոն-2 ՔՇՀ-4 թիվ 18 բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասի՝ չափաբաժնի նվիրատվության պայմանագիր:
3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի համայնքի ավագանու 2018թվականի սեպտեմբերի 14-ի «Տիգրան Վասակի Կիրակոսյանին վարձակալությամբ բնակարան հանձնելու մասին» թիվ 109 որոշումը՝ լուծելով 2019թ.-ի փետրվարի 26-ին կնքված «անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը»:

**ԿՈՂՄ ( 25 )** **ԴԵՄ ( 0 )** **ՁԵՌՆՊԱՀ ( 0 )**

| | | | |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | --- | — |
| Գ.Քալանթարյան | Կ.Դավթյան | | |
| Վ.Դոխոյան | Ա.Խաչատրյան | | |
| Ա.Մատինյան | Ք. Մարուքյան | | |
| Ա.Ափինյան | Կ. Ղուկասյան | | |
| Վ.Ավագյան | Ա.Սիրադեղյան | | |
| Ս.Մելքոնյան | Հ.Սիմիկյան | | |

Ս.Ղամբարյան Վ.Կռոյան

Մ.Ապերյան Ա.Կարապետյան

Հ.Ղամբարյան Ս.Կարապետյան

Դ.Հակոբյան Ռ.Մարգարյան

Ս.Աղաբեկյան Կ.Բեկչյան

Ա.Լոքյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 131**

## «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 32 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՈՒՄԲ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու անդամ Վահագն Ավագյանի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով,Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 26 հունվարի 2007 թվականի «ՀՀ պետական և նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» թիվ 29-Ն հրամանով, Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «Վանաձոր համայնքի թիվ 32 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում բացել ևս մեկ խումբ:

| ԿՈՂՄ ( 26 ) | | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 0 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | --- | --- |
| Գ.Քալանթարյան | Կ.Դավթյան | | |
| Վ.Դոխոյան | Ա.Խաչատրյան | | |
| Ա.Մատինյան | Ք. Մարուքյան | | |
| Ա.Ափինյան | Կ. Ղուկասյան | | |
| Հ.Մովսիսյան | Ա.Սիրադեղյան | | |
| Վ.Ավագյան | Հ.Սիմիկյան | | |
| Ս.Մելքոնյան | Վ.Կռոյան | | |
| Ս.Ղամբարյան | Ա.Կարապետյան | | |
| Մ.Ապերյան | Ս.Կարապետյան | | |
| Հ.Ղամբարյան | Ռ.Մարգարյան | | |
| Դ.Հակոբյան | Կ.Բեկչյան | | |
| Ս.Ադաբեկյան | Ա.Լոքյան | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 132**

### «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 34 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՈՒՄԲ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Վանաձոր համայնքի թիվ 34 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անի Վարդանյանի զեկուցագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 26 հունվարի 2007 թվականի «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» թիվ 29-Ն հրամանով Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1.«Վանաձոր համայնքի թիվ 34 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում բացել ևս մեկ խումբ:

**ԿՈՂՄ ( 25 )** **ԴԵՄ ( 0 )** **ՁԵՌՆՊԱՀ ( 0 )**

| ԿՈՂՄ | | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Կ.Դավթյան | --- | — |
| Գ.Քալանթարյան | Ա.Խաչատրյան | | |
| Վ.Դոխոյան | Ք. Մարուքյան | | |
| Ա.Մատինյան | Կ. Ղուկասյան | | |
| Ա.Ափինյան | Ա.Սիրադեղյան | | |
| Հ.Մովսիսյան | Հ.Սիմիկյան | | |
| Վ.Ավագյան | Վ.Կռոյան | | |
| Ս.Մելքոնյան | Ա.Կարապետյան | | |
| Ս.Ղամբարյան | Ս.Կարապետյան | | |
| Մ.Ապերյան | Ռ.Մարգարյան | | |
| Հ.Ղամբարյան | Կ.Բեկչյան | | |
| Դ.Հակոբյան | Ա.Լոքյան | | |
| Ս.Աղաբեկյան | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 133**

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 105-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Վանաձոր համայնքի թիվ 34 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անի Վարդանյանի զեկուցագիրը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 105-Ա որոշման թիվ 17 հավելվածում կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:

| ԿՈՂՄ ( 25 ) | | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 0 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Կ.Դավթյան | --- | — |
| Գ.Քալանթարյան | Ա.Խաչատրյան | | |
| Վ.Դոխոյան | Ք. Մարուքյան | | |
| Ա.Մատինյան | Կ. Ղուկասյան | | |
| Ա.Ափինյան | Ա.Սիրադեղյան | | |
| Հ.Մովսիսյան | Հ.Սիմիկյան | | |
| Վ.Ավագյան | Վ.Կոռյան | | |
| Ս.Մելքոնյան | Ա.Կարապետյան | | |
| Ս.Ղամբարյան | Ս.Կարապետյան | | |
| Մ.Ապերյան | Ռ.Մարգարյան | | |
| Հ.Ղամբարյան | Կ.Բեկչյան | | |
| Դ.Հակոբյան | Ա.Լոքյան | | |
| Ս.Աղաբեկյան | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 134**

## «ՎԱՆԱՁՈՐԻ ԱԼԲԵՐՏ ԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ «ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃՆԵՐԸ «ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի պաշտոնակատարի գրությունը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «Վանաձորի Ալբերտ Ազարյանի անվան «Կենտրոն» համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզադահլիճները 3 տարի ժամկետով, տարեկան՝ 700 000 /յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ վարձավճարով հանձնել վարձակալության «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամին՝ մարմնամարզության դասեր պարապելու նպատակով:
2. «Վանաձորի Ալբերտ Ազարյանի անվան «Կենտրոն» համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրենին՝ «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել վարձակալության պայմանագիր:

| ԿՈՂՄ ( 25 ) | | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 0 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | --- | — |
| Գ.Քալանթարյան | Կ.Դավթյան | | |
| Վ.Դոխոյան | Ա.Խաչատրյան | | |
| Ա.Մատինյան | Ք. Մարուքյան | | |
| Ա.Ափինյան | Կ. Ղուկասյան | | |
| Հ.Մովսիսյան | Ա.Սիրադեղյան | | |
| Վ.Ավագյան | Հ.Սիմիկյան | | |
| Ս.Մելքոնյան | Վ.Կոռյան | | |
| Ս.Ղամբարյան | Ա.Կարապետյան | | |
| Մ.Ապերյան | Ս.Կարապետյան | | |
| Հ.Ղամբարյան | Կ.Բեկչյան | | |
| Դ.Հակոբյան | Ա.Լոքյան | | |
| Ս.Աղաբեկյան | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 135**

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 74-րդ հոդվածի, 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթներով, 81-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը տրամադրել մրցույթով կառուցապատման իրավունքով և սահմանել հողամասերի վարձավճարների մեկնարկային գները՝

**ա) Այլ հողամասերի համար**

**(10 տարի ժամկետով)**

1ա.1 Նաիրի փողոց, թիվ 20-1 հողամաս 0,2156հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0781-հց, հողամասի վարձավճարի մեկնարկային գինը սահմանված է ամսական 43120 դրամ:

1ա.2 Նաիրի փողոց, թիվ 20-2 հողամաս 0.21569հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0781-հց, հողամասի վարձավճարի մեկնարկային գինը սահմանված է ամսական 43138 դրամ:

| ԿՈՂՄ ( 13 ) | | ԴԵՄ ( 6 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 2 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | Ս.Ղամբարյան | Գ.Քալանթարյան |
| Ա.Մատինյան | Կ.Դավթյան | Ք. Մարուքյան | Կ. Ղուկասյան |
| Ա.Ափինյան | Ա.Խաչատրյան | Հ.Սիմիկյան | |
| Վ.Ավագյան | Մ.Ապերյան | Վ.Կոռյան | |
| Ս.Մելքոնյան | Հ.Ղամբարյան | Ս.Կարապետյան | |
| Ս.Աղաբեկյան | Դ.Հակոբյան | Կ.Բեկչյան | |
| Ա.Լոռյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 136**

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 68-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել աճուրդով օտարվող հետևյալ հողամասերի մեկնարկային գները հողի կադաստրային արժեքի չափով

**ա) Անհատական բնակարանաշինության համար**

1ա.1 Բաթումի փողոց, թիվ 21-1/3 հողամաս 0,002649հա, կադաստրային ծածկագիր - 06-001-0345-հց, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 2940 դրամ:

1ա. 2 Փարաջանովի փողոց, թիվ 4/1 հողամաս 0.0903հա, կադաստրային ծածկագիր - 008-022-հց, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 1914 դրամ:

1ա. 3 Փարաջանովի փողոց, թիվ 4/2 հողամաս 0.0903հա, կադաստրային ծածկագիր - 008-023-հց, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 1914 դրամ:

**բ) Հասարակական սպասարկման օբյեկտների կառուցման համար**

1բ.1 Տարոն-2 թաղամաս, Ուկրաինական պողոտա, թիվ 1/2-4 հողամաս 0,03հա, կադաստրային ծածկագիր - 06-001-0010-հց, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 1914 դրամ:

1բ. 2 Տարոն-4, Մեքենաշինարարների թիվ 41/1-8/1 հողամաս 0,00222հա, կադաստրային ծածկագիր - 06-001-0108-հց, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 1914 դրամ:

1բ.3 Տարոն-4, Ածխահատների թաղամաս թիվ 14/1 հողամաս 0.012հա, կադաստրային ծածկագիր - 06-001-0114-հց, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 1914 դրամ:

1բ. 4 Նարեկացու փողոց, թիվ 4/3-1 հողամաս 0,0024հա, կադաստրային ծածկագիր - 06-001-0262-հց, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 1914 դրամ:

1բ. 5 Համբարձումյան փողոց, թիվ 8/1-8 հողամաս 0,0056հա, կադաստրային ծածկագիր - 06-001-1022-հց, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 1914 դրամ:

1բ. 6 Երևանյան խճուղի, թիվ 117/1-2 հողամաս 0.00381հա, կադաստրային ծածկագիր - 06-001-1056-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 1914 դրամ:

1բ. 7 Երևանյան խճուղի, թիվ 129/30-1 հողամաս 0.00405հա, կադաստրային ծածկագիր - 06-001-1055-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 1914 դրամ:

1բ. 8 Տարոն-2 թաղամաս, թիվ 2/1-2 հողամաս 0.02372 հա, կադաստրային ծածկագիր - 06-001-0009-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 1914դրամ:

1բ. 9 Շիրակացու փողոց, թիվ 2-3/1 հողամաս 0.01 հա, կադաստրային ծածկագիր - 06-001-0229-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 2940 դրամ:

**գ) Ավտոտնակների կառուցման համար**

1գ.1 Շիրակի խճուղի, թիվ 66/16-1 հողամաս 0,00261հա, կադաստրային ծածկագիր - 06-001-0149-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 1914 դրամ:

1գ.2 Նարեկացու փողոց, թիվ 6/41-2 հողամաս 0,00474հա, կադաստրային ծածկագիր - 06-001-0262-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 1914 դրամ:

1գ.3 Նարեկացու փողոց, 3-րդ փակուղի, թիվ 30/3 հողամաս, 0,0024հա, կադաստրային ծածկագիր - 06-001-0254-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 1914 դրամ:

**ԿՈՂՄ ( 11 )** **ԴԵՄ ( 7 )** **ՁԵՌՆՊԱՀ ( 2 )**

| | | | |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | Ք. Մարուքյան | Գ.Քալանթարյան |
| Ա.Մատինյան | Կ.Դավթյան | Հ.Սիմիկյան | Ս.Ղամբարյան |
| Ա.Ափինյան | Ա.Խաչատրյան | Կ.Բեկչյան | |
| Ս.Մելքոնյան | Կ. Ղուկասյան | Վ.Ավագյան | |
| Ս.Աղաբեկյան | Վ.Կոռյան | Մ.Ապերյան | |
| Ա.Լոքյան | | Հ.Ղամբարյան | |
| | | Դ.Հակոբյան | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 137**

## ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 167 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դինամո» Հայաստանի մարզական հասարակական կազմակերպության կողմից լիազորված անձ Բագրատ Վալերիկի Ավոյանի դիմումը և լիազորագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի համայնքի ավագանու 25 սեպտեմբերի 2003 թվականի «Հայաստանի «Դինամո» մարզական հասարակական կազմակերպությանը շինություն նվիրելու մասին» թիվ 167 որոշումը՝ 2003թ. դեկտեմբերի 09-ի «Փայտե մանկապարտեզային համալիրի նվիրատվության» թիվ 1665 պայմանագիրը համարելով լուծված:

| ԿՈՂՄ ( 20 ) | | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 0 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | --- | — |
| Գ.Քալանթարյան | Կ.Դավթյան | | |
| Ա.Մատինյան | Ա.Խաչատրյան | | |
| Ա.Ափինյան | Ք. Մարուքյան | | |
| Վ.Ավագյան | Կ. Ղուկասյան | | |
| Ս.Մելքոնյան | Հ.Սիմիկյան | | |
| Ս.Ղամբարյան | Վ.Կռոյան | | |
| Մ.Ապերյան | Կ.Բեկչյան | | |
| Հ.Ղամբարյան | Ա.Լոքյան | | |
| Դ.Հակոբյան | Ս.Աղաբեկյան | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 138**

**ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ՝ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.0099 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ 06-001-0208-0010 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղ ԱՍ-ի տնօրեն Գ.Սարգսյանի 08.05.2019 թվականի թիվ 01-ԳՍ-399 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալի 23.09.2019թ. թիվ 06/11.2/4571-2019 գրությունը, ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 18.09.2019թ. թիվ 68 եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի փոփոխության վերաբերյալ շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված առաջարկությունների և դիտողությունների ամփոփաթերթը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, Վանաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 9-րդ, 11-րդ, 14-րդ մասերով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն, 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշումներով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Փոխել Վանաձոր համայնքի Նարեկացու փողոցի 1-ին փակուղի թիվ 11 հասցեում գտնվող 0.0099հա մակերեսով 06-001-0208-0010 ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի հողերից՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի:

2. Հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել Վանաձոր համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

| ԿՈՂՄ ( 20 ) | | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 0 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | --- | --- |
| Գ.Քալանթարյան | Կ.Դավթյան | | |
| Ա.Մատինյան | Ա.Խաչատրյան | | |
| Ա.Ափինյան | Ք. Մարուքյան | | |
| Վ.Ավագյան | Կ. Ղուկասյան | | |
| Ս.Մելքոնյան | Հ.Սիմիկյան | | |

Ս.Ղամբարյան Վ.Կռոյան

Մ.Ապերյան Կ.Բեկչյան

Հ.Ղամբարյան Ա.Լոքյան

Դ.Հակոբյան Ս.Աղաբեկյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 139**

**ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 12.07.2019թ. թիվ Կ-09/07/2019-34-0046 և ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 12/09/2019թ. թիվ Կ-12092019-06-0010 որոշումները, կադաստրային քարտեզի քաղվածքներն և Վանաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունն այն մասին, որ կադաստրային քարտեզի և տեղեկագրքերի համաձայն 06-001-4000-0001 ծածկագրից 0.0090հա և 06-001-0437-0025 ծածկագրից 0,0345հա մակերեսով հողամասերը սխալմամբ հաշվառվել է որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամասեր և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը 06-001-4000-0001 ծածկագրից 0.0090հա և 06-001-0437-0025 ծածկագրից 0,0345հա մակերեսով հողամասերի նկատմամբ՝ համաձայն կադաստրային քարտեզից քաղվածքների:

2. Վանաձոր համայնքի ղեկավար Մ. Ասլանյանին՝ դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում 06-001-4000-0001 ծածկագրից 0.0090հա և 06-001-0437-0025 ծածկագրից 0,0345հա մակերեսով հողամասերի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու և սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:

| ԿՈՂՄ ( 19 ) | | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 0 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | --- | --- |
| Գ.Քալանթարյան | Կ.Դավթյան | | |
| Ա.Մատինյան | Ա.Խաչատրյան | | |
| Ա.Ափինյան | Ք. Մարուքյան | | |
| Վ.Ավագյան | Կ. Ղուկասյան | | |
| Ս.Մելքոնյան | Հ.Սիմիկյան | | |

Ս.Ղամբարյան Վ.Կռոյան

Մ.Ապերյան Կ.Բեկչյան

Հ.Ղամբարյան Ս.Աղաբեկյան

Դ.Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 140**

## ՕՎՍԱՆՆԱ ՆՈՐԱՅՐԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3-1/4-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Օվսաննա Նորայրի Թադևոսյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06052019-06-0043 վկայականը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 3-1/4-1 հասցեում գտնվող հողամասը (ծանրաբեռնված շարժական գույքով)՝ համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06052019-06-0043 վկայականի, նվիրատվությամբ հանձնել Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 1/5-1 հասցեի բնակիչ Օվսաննա Նորայրի Թադևոսյանին:
2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Օվսաննա Նորայրի Թադևոսյանի հետ կնքել հողամասի նվիրատվության պայմանագիր:

| ԿՈՂՄ ( 20 ) | | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 0 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | --- | — |
| Գ.Քալանթարյան | Կ.Դավթյան | | |
| Ա.Մատինյան | Ա.Խաչատրյան | | |
| Ա.Ափինյան | Ք. Մարուքյան | | |
| Վ.Ավագյան | Կ. Ղուկասյան | | |
| Ս.Մելքոնյան | Հ.Սիմիկյան | | |
| Ս.Ղամբարյան | Վ.Կոռյան | | |
| Մ.Ապերյան | Ս.Կարապետյան | | |
| Հ.Ղամբարյան | Կ.Բեկչյան | | |
| Դ.Հակոբյան | Ս.Աղաբեկյան | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հոկտեմբերի 2019 թվականի N 141**

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2019թ. նոյեմբերի 28-ը:

| ԿՈՂՄ ( 19 ) | | ԴԵՄ( 1 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 0 ) |
|---|---|---|---|
| Մ.Ասլանյան | Ա.Փելեշյան | Կ.Բեկչյան | — |
| Գ.Քալանթարյան | Կ.Դավթյան | | |
| Ա.Մատինյան | Ա.Խաչատրյան | | |
| Ա.Ափինյան | Ք. Մարուքյան | | |
| Վ.Ավագյան | Կ. Ղուկասյան | | |
| Ս.Մելքոնյան | Հ.Սիմիկյան | | |
| Ս.Ղամբարյան | Վ.Կոռյան | | |
| Մ.Ապերյան | Ս.Կարապետյան | | |
| Հ.Ղամբարյան | Ս.Աղաբեկյան | | |
| Դ.Հակոբյան | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ**

**2019 թ. հոկտեմբերի 18**
**ք.Վանաձոր**